

չէր համարուեր ինքզինք կառավարելու: Բայց եւ այնպէս խելացիներն անմիջապէս հասկցան, թէ առանց Անգլիոյ պաշտպանութեան նորեկները պիտի կորսուին միլիոնի մը հասնող տեղացի արարներու մէջ, որոնք ստեղծութեամբ կը դիտէին անոնց վերադարձը եւ ամբողջովին նուիրուեցան երկրի իրական եւ մտաւորական տիրապետութեան:

Պէտք էր նախ եւ առաջ հող գնել, որպէսզի կառելի ըլլար այնտեղ գաղթականներ հաստատել: Անփականութեան վրայ հրէական եւ հռոմէական գաղափարները կը տարբերին իրարմէ: Հռոմէական օրէնքով, որով կ'առաջնորդուին գրեթէ բոլոր ժողովուրդները, անձնական սեփականութիւնն անձեռնմխելի եւ մշտնջենական է, մինչդեռ հրէականը վերջնական սեփականատիրութիւն չ'ընդունիր: Ղեւտացուց Գրքին մէջ ըստած է. «Հողը չպիտի ծախուի մշտնջենական պայմանով, որովհետեւ հողն ինձ կը պատկանի՝ կ'ըսէ Յաւիտենականը»:

Յաւիտենականի հաւատքը վերցած է անշուշտ շատ մը սիոնիստներու մտքէն, բայց անոնք Եհովային տեղ կը դնեն հրէայ ժողովուրդ բարբառ եւ կ'ըսեն «հողն իմն է, կ'ըսէ Իսրայէլի ժողովուրդը»:

Ազգային հիմնադրամ մը հաստատուեցաւ բոլոր հրէաներէն հաւաքուած տուրքերով, եւ այդ գումարներով մաս առ մաս կը գնուին հողեր իւր ազգային կալուած, ու Պաղեստինեան գաղթականը կը նկատուի իւր Իսրայէլի ազաւակաւոր: Որոշ պայմաններով այդ վարձու երկրագործները կ'ընան հետզհետէ սեփականատէր դառնալ:

Իր սկզբնական շրջանին մէջ անկարելի է որ գաղթականական գործը ընթանայ առանց դժուարութեանց եւ լրացմակողմանի թերութեանց: Բայց կարելի է արդէն ըսել, թէ Հէսի, Պինսկէրի եւ Հէրցլի երազները իրականացման լաւագոյն ճամբուն մէջ են եւ յուսալի է թէ հրէական հաստատամտութիւնն ու զբամբը պիտի յաղթեն վերջի վերջոյ այժմեան խոչընդոտներուն, եթէ նոր վերելվայրումներ կամ անակնկալներ չգան կասեցնելու սկսուած

գործն եւ այնտեղ թափուած դիտակից ճիգերը:

Յառաջդիմութեան գլխաւոր արդելքը կը լիման եւ հողն են: Ջուրը քիչ է, մշակելի հողը անբաւական, բուսականութիւնը թերի: Մեծ աշխատանք պէտք է հին ժամանակներու թիկնիները, ձիթենիներն ու որթերը նորէն աճեցնելու համար: Կարեւորն այն է որ հրէան ինք մշակէ հողը եւ ոչ թէ ստանձնէ միայն առաջնորդի եւ ղեկավարի դերը եւ գործիքներն յանձնէ տեղացի արաբ մշակին:

Դժուար է նաեւ զբամական հարցի լուծումը: Ամերիկացի հրէաները նպաստաւոր են սիոնիզմին եւ ազգային Փոնտի մեծ բաժինը Նիւ Եորքի մէկ եւ կէս միլիոն հրէաները արւած են: Բայց արեւմտեան Եւրոպայի հրէաներն, որ այսչափ ժամանակներէ հետէ ընտելացած են տեղական բարքերուն եւ միջավայրին, շատ հաշտ աչքով չեն նայիր սիոնիզմին, մանաւանդ որ Յուդայի կրօնքէն շատոնց հրաժարած են արդէն: Ըստ անոնց՝ սիոնականութեան նման ազգայնական եւ անջատողական ձգտումները կը ծառայեն միայն հակահրէական զգացումներու արծարծման եւ, քանի որ արդիւնքը տարակուսական է, պէտք է հրաժարիլ անոնցմէ եւ աշխատիլ միջազգայնականութեան յաղթանակին...

Հակասիոնականները կը յիշեն միշտ Քլէմանտոյի խօսքը խաղաղութեան վեհաժողովին մէջ. «Պաղեստինը կ'ընա՞յ աշխարհի տասներորդ միլիոն հրէաները պարունակել: Ո՛չ: Ուրեմն հրէական հարցը մասնակի կերպով միայն լուծող միջոց մը չի հետաքրքրեր դիս»:

Անոնք կ'ըսեն թէ սիոնիստը հրէայ մըն է, որ ուրիշ մը Պաղեստին չ'ըրկելու կ'աշխատի...

Առանց այս երկու կուսակցութեանց ներքին վէճերէն ոեւէ գրական արդիւնք հանել փորձելու, պէտք է ընդունինք, թէ Հէրցլն ի վեր հրէական խնդիրը կարեւոր փոփոխութիւններ կրած է եւ Ռուսիոյ կամ Ռումանիոյ հրէաներն իրենց համար ապաւէնի մը յոյսն ունին, եթէ երբեք նոր հալածանքները բռնկին երբ եւ իցէ: Անոնց հայրենիքի դռները բաց են բարեբախտաբար...